ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կ. Ռ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Սփյուռքի ազգային կյանքի աննախընթաց աշխուժացման գործոններից մեկը 1960-ական թթ. ի վեր Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված համաժողովրդական շարժման նոր ալիքն էր։ Հայ դատի հետապնդման լայնատարած աշխատանքները, քաղաքական-քարոզչական ծավալուն գործողություններն ուղղված էին ոչ միայն հայության հիշողության արթնացմանը, այլև առավելապես օտար հասարակական կարծիքը, պետությունների և միջպետական մարմինների ուշադրությունը Հայ դատի վրա բևեռելու նպատակին։ Պետությունների՝ հասարակական և գիտական մակարդակներով քննարկումների նախապատրաստական աշխատանքներին իրենց առավելագույն մասնակցությունն են բերել սփյուռքի այլազան կազմակերպությունները, որոնց շարքում իր ուրույն տեղն է գրավում Ամերիկայի հայկական համագումարը։ Այս կազմակերպության առաջացումը կապված էր ամերիկահայ համայնքի առջև ծառացած մի շարք խնդիրների հետ։

Վերջին երեք տասնամյակների ընթացքում ԱՄՆ-ի հայ համայնքի հասարակական կյանքում նկատվում են նոր միտումներ, որոնք հատկապես բնորոշ են ամերիկյան ծագում ունեցող հայերին։ Որոշակի սոցիալական կարգավիճակ ձեռք բերած ամերիկահայերի զգալի հատվածն աստիճանաբար սկսում է հեռանալ ԱՄՆ-ի հայ համայնքի ավանդական քաղաքական գործունեության ձևերից, չի մասնակցում հայ քաղաքական կուսակցությունների գործունեությանը։ Դա հատկապես վերաբերում է ամերիկյան ծագում ունեցող հայերի երիտասարդ սերնդին, որը հիմնականում կողմնորոշված է դեպի քաղաքական առաջնությունների և հետաքրքրությունների ամերիկյան տարրապատկերը։ Միևնույն ժամանակ, իրենց էթնիկական ինքնագիտակցությունը պահպանած մեծ թվով ամերիկահայեր մեծ հետաքրքրություն են ցուցաբերում հայ ազգային խնդիրների լուծման նկատմամբ։ Նրանց համար հատուկ նշանակություն ունի ԱՄՆ-ի քաղաքական համակարգում հայերի տեսակարար կշռի մեծացումը և հայ ազգային արժեքների ճանաչումը ԱՄՆ-ի հասարակական կարծիքի կողմից, քանզի դա կարող է նպաստել նրանց էթնիկական ինքնահաստատմանը ամերիկյան բազմազգ հասարակության մեջ։ Տասնամյակների ընթացքում բազմաթիվ ամերիկահայեր ծանրակշիռ դիրքեր են գրավել ամերիկյան հասարակական կյանքի տարբեր բնագավառներում՝ դաշնակցային և նահանգային խորհրդարաններում ու կառավարություններում, պետական և դիվանագիտական ծառայության մեջ, արտադրության և ձեռներեցության ոլորտներում, առողջապահության, գիտության, գրականության, արվեստի և այլ ասպարեզներում։ Սակայն, ամերիկյան ապակենտրոնացնող շրջապատում հայ համայնքի զլխավոր անհարմարությունը կենտրոնական կամ գերագույն մարմնի բացակայությունն էր. մարմին, որը բարոյական ղեկավարության դեր կարող էր ստանձնել և իր ազդեցության միջոցով համակարգել համայնքի գործողությունները։

ԱՄՆ-ի հայ համայնքը արդի փուլում բնորոշող վերոհիշյալ միտումները հանգեցրին Ամերիկայի հայկական համագումար (ԱՀՀ) կազմակերպության ստեղծմանը, որը ներկայումս ոչ միայն ամերիկահայության, այլև ամբողջ սփյուռքի ամենաազդեցիկ կազմակերպություններից մեկն է։ Հայկական համագումարը վիթխարի հայանպաստ գործունեություն է ծա-

վալել ԱՄՆ-ի պետական և հասարակական շրջանակներում։ Նրա աշխատանքներն ուղղվում են Հայ դատի հետապնդման, ամերիկահայերի պաշտպանության, մի շարք դիտական, կրթական և մշակութային ծրագրերի իրականացման գործին։ Վերջին տարիների ընթացքում ԱՀՀ-ն ակտիվ գործունեություն է ծավալել նաև Արցախի հիմնախնդրի առնչությամբ և դրական կապեր է պահպանում հայրենիքի հետ։

Ամերիկայի հայկական համագումարը հիմնադրվեց է 1972 թ.՝ իբրև կրթական և բարեսիրական հիմնադրամ։ Կազմակերպության շտաբ-կայանը գտնվում է Վաշինգտոնում։ 1978 թ. մասնաճյուղ ստեղծվեց Լոս Անջելեսում, իսկ 1989 թ.՝ գրասենյակ բացվեց Երևանում։

Կազմակերպությունը ստեղծվել է մի խումբ ականավոր ամերիկահայ մտավորականների նախաձեռնությամբ, որոնց թվում էին Ջորջ Վաշինգտոնի համալսարանի պրոֆեսոր Ջոն Հաննեսյան, Կալիֆորնիայի համալսարանի հայոց պատմության պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը, դոկտոր Հայկազ Գրիգորյանը, «Բիշթեյ» ընկերության գլխավոր ինժեներ, դ-ր Լիոնել Գալստոնը, Միչիգանի համալսարանի դրականության և արվեստի տոմրոնի վարիչ, պրոֆ. Դենիս Փափազյանը, Բենթլի քոլեջի տնօրեն, դ-ր Գրիգոր Աղամյանը, Բոստոնի նշանավոր փաստաբաններ Ռորերտ Գալստյանը և Հայկ Տեր-Մանվելյանը։ Ընդհանուր դրամական միջոցներ, որոնք 1995 թ. կազմում էին շուրջ 8 մլն. 120 հազար դոլար[1], հիմնականում ձևավորվել են հիմնադրամի ստեղծման երկու նախաձեռնողների՝ «Ստար Մարկետս» ընկերության տնօրեն Սամվել Մուշարի և «Հովսոնդ» ընկերության նախագահ Հրայր Հովնանյանի նվիրատվություններից։ Վերջինս մինչև օրս էլ կազմակերպության Հոգաբարձուների խորհրդի նախագահն է։

Կազմակերպության հիմնադիր համաժողովը գումարվեց 1972 թ. մայիսի 5—7-ին Ուորենթոն քաղաքի (Վիրջինիա) Էրլայ վայրում։ Համաժողովին մասնակցում էին ԱՄՆ-ի հայ համայնքի շուրջ 80 ներկայացուցիչներ, որոնք պատկանում էին տարբեր քաղաքական ու եկեղեցական հոսանքների և ներգրավված էին գործունեության տարբեր բնագավառներում։ Համագումարի մասնակիցները հրավիրվել էին իբրև անհատներ, այնուամենայնիվ, մեծ ջանքեր էին գործադրվել հայ համայնքի տարբեր հատվածների ու եկեղեցական թեմերի միջև հավասարակշռություն պահպանելու համար։ Այս ոչ պաշտոնական ներկայացուցիչներից բացի, մասնակցում էին նաև ականավոր շատ մտավորականներ, պետական պաշտոնյաներ, ձեռներեցներ և համայնքի շատ այլ աշխի ընկնող գործիչներ։ Համաժողովի մասնակիցները բաժանվեցին երեք առանձին խմբերի՝ ամերիկահայ համայնքի կարիքները նշելու, այդ կարիքների նկատմամբ առաջնահերթություն սահմանելու և դրանց իրագործման ուղիներն ու միջոցները որոնելու համար։

Համաժողովի քննարկած հիմնական խնդիրներից մեկը ամերիկահայության էթնիկական ինքնության պահպանման հարցն էր, որը դիտվում էր իբրև սրընթաց կլլելով զարգացող ամերիկյան շրջապատում հայերի կենսունակության ու աղդեցիկ դիրքերի պահպանման ամենակարևոր գործոններից մեկը[2]։ Քննարկելով ամերիկահայերի ազգային ինքնագիտակցության բարձրացման մեխանիզմները՝ մասնակիցները, ի շարս ազգայն-քաղաքական այլ խնդիրների, նշեցին համայնքին հուզող այն հրատապ հարցերը, որոնք վերաբերում էին հայկական դպրոցներին ու համայնքի կենտրոններին, հայ արվեստին ու հայագիտական ծրագրերին, եկեղեցուն, Հայ ազգային ինստիտուտ (ANI) ստեղծելուն և այլն։ Մասնակիցները նպատակ դրեցին ստեղծել համազգային կազմակերպություն, որի նպատակն էր լինելու «գոյություն ունեցող կազմակերպությունների համընկնող գործողու-

---

[1] Armenian Assembly of America. Annual Reporter 1995. p. 32.

[2] The Armenian Assembly. Summary Report, Washington. 1973. p. 14.

թյունների կոորդինացումը»[3], «Հայկական հարցը ՄԱԿ-ում ներկայացնելը», «Հայոց ցեղասպանության վերաբերյալ փաստաթղթերի հավաքումն ու մշակումը»[4]։ Քաղաքական ընդգավառում համագումարն ընդունեց, որ պետք է հստակեցվեն հայ ժողովրդի նպատակները և «ընդգծեց ամերիկյան քաղաքական համակարգում հայերի ներգրավման կարևորությունը՝ հատուկ շեշտ գնելով Վաշինգտոնում սեփական լոբբի ունենալու և Հայ Դատի հետապնդման անհրաժեշտության վրա»[5]։ Ստեղծվելիք կազմակերպության այս և մի շարք այլ ծրագրերի իրականացման համար նախատեսվում էր ստեղծել 100 մլն. դոլարի հասնող հիմնադրամ[6]։ Միաձայն ընդունվեց մի բանաձև, որտեղ ասվում էր, որ «Հայկական համագումարը պետք է լինի մի համաժողով՝ բոլոր քաղաքական, կրոնական ու փիլիսոփայական համողմունքների տեր ամերիկահայերի համար, որը հնարավորություն կտա ամերիկահայության շրջանում ստեղծել և զարգացնել վստահության ու միասնության մթնոլորտ, հետապնդել ընդհանուր նպատակներ, մատնանշել համայնքի կարիքները և քայլեր ձեռնարկել այդ կարիքների իրագործման ուղղությամբ»[7]։ Քաղաքական այս պլատֆորմի վրա համագումարին հաջողվեց համախմբել ամերիկահայ համայնքի գրեթե բոլոր ազդեցիկ ուժերը և քայլեր ձեռնարկել կազմակերպական կառույցների ու կանոնադրության ստեղծման ուղղությամբ։ Ընտրվեց Աղղային ղեկավար կոմիտե, որի առաջին նախագահն էր Ջոն Հաննեսյանը։ Ի մի բերելով և ընդհանրացնելով էրլայում, Լոս Անջելեսում և Ֆրեզնոյում տեղի ունեցած ժողովների արդյունքները՝ Հայկական համագումարի ղեկավար կոմիտեն հրապարակեց կազմակերպության նպատակներն ու խնդիրները, որոնք բաղկացած էին 10 կետից.

1. Ստեղծել համազգային կառույց՝ Միացյալ Նահանգներում հայ անհատների և կազմակերպությունների համաձայնեցված գործունեության համար։

2. Ձեռնարկել Միացյալ Նահանգների՝ հայ համայնքի վերաբերյալ հետազոտական նախագծերի և տեղեկատվական ժողովածուի, ինչպես նաև հայերի ժամանակակից ժողովրդագրական պատկերի նախապատրաստումը։

3. Միջոցներ ձեռնարկել հայ համայնքին անմիջականորեն վերաբերող ապատեղեկատվության դեմ, ինչպես նաև վերստուգել հրատարակված նյութերն ու լրատվական միջոցների թողարկումները՝ սխալներն ու բացթողումները բացահայտելու և դրանց վրա հրավիրելու պատասխանատու անձանց ու կազմակերպությունների ուշադրությունը։

4. Ստեղծել կենտրոնական մարմին՝ դիտաժողովների, հրապարակումների, լրատվական նամակների և ցուցահանդեսների միջոցով հայ մշակույթի և պատմության վերաբերյալ տեղեկությունների համակարգված տարածման և տեղեկատվական կենտրոնի ու ընթացիկ նյութերի գրադարանի գործառնության համար։

5. Հայ համայնքն ապահովել անհրաժեշտ միջոցներով՝ համապատասխան և հարկ եղած դեպքերում մեկ ձայնով հանդես գալու համար։

6. Աջակցել հայերի և հայկական գործողությունների մասնագիտացմանը և նպաստել ԱՄՆ-ի քաղաքական, տնտեսական և սոցիալական կյանքում հայերի նշանակալից ուժ դառնալուն։

7. Նպաստել հայ մշակույթի անընդհատությանն ու զարգացմանը, հատկապես այն պատանիների ու երիտասարդների շրջանում, որոնք աստիճանաբար շեղվում են դրանից։

---

3 Նույն տեղում, էջ 20։

4 Նույն տեղում, էջ 6։

5 The Armenian Reporter, 11. V. 1972.

6 The Armenian Assembly. Summary Report, p. 6.

7 Նույն տեղում, էջ 10։

8. Կանխել պատմական նշանակություն ունեցող հայկական ճարտարապետական հուշարձանների հետագա ավերումը և նպաստել դրանց պահպանմանը Թուրքիայում և ամբողջ աշխարհում։

9. Հետամուտ լինել Հայոց ցեղասպանության փաստի ճանաչմանը համապատասխան միջազգային ատյանների, այդ թվում նաև Միավորված Ազգերի (Կազմակերպության—Կ. Ն.) Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից։

10. Աջակցել Սփյուռքում հայ ժողովրդի շահերի պաշտպանության գործին[8]։

Վերոհիշյալ նպատակները պետք է իրականացվեին առկա կազմակերպությունների հետ համատեղ և հնարավորության դեպքում նրանց գործուն մասնակցությամբ։

1972—1974 թվականները Հայկական համագումարի կառուցվածքային ձևավորման և կազմակերպական կայացման տարիներն էին։ Այդ տարիների ընթացքում կազմակերպությունը գումարեց ևս երկու համաժողով Էրլայում և մի շարք տարածաշրջանային (տեղական) ժողովներ ԱՄՆ-ի գրեթե բոլոր հայաշատ վայրերում՝ Կալիֆորնիայում (Ֆրեզնո, Լոս Անջելես), Մասաչուսետսում (Բոստոն, Վալթհամ), Միչիգանում (Դետրոյտ, Դիրբորն), Նյու Յորքում, Վաշինգտոնում և այլ վայրերում։ Բոլոր այդ ժողովների մասնակիցները ողջունում էին Հայկական համագումար կազմակերպության ստեղծման գաղափարը և կարծիքներ էին փոխանակում ստեղծվելիք կազմակերպության բազմազան խնդիրների շուրջ։ Կազմակերպության կառուցվածքի վերաբերյալ ժողովականները համակարծիք չէին, և ոմանք այն գիտում էին իբրև «անհատների համագումար»[9], իսկ մյուսներն էլ՝ իբրև՝ «կազմակերպությունների կոնգրես»[10]։ Այդ տարաձայնությունները կապված էին այն մտավախության հետ, որ երկրորդ տարբերակի՝ «կազմակերպությունների համագումար» ձևակերպման ընդունման դեպքում հայ քաղաքական կուսակցություններից որևէ մեկը (ավելի շուտ՝ ՀՅԴ-ն) ամերիկահայ համայնքում իր Հովանու տակ գործող մեծաթիվ հաստատությունների շնորհիվ կարող է առաջնակարգ դիրքեր գրավել կազմակերպության ղեկավար մարմիններում և այն ենթարկել իր ազդեցությանը։ Ուստի այդ առաջարկը մերժվեց և, ի վերջո, ընդունվեց փոխգիջումային մի տարբերակ, որի համաձայն, կազմակերպության անդամները, տարբեր քաղաքական, կրոնական, բարեգործական, մշակութային և այլ հաստատությունների անդամներ լինելով հանդերձ, չեն կարող լինել այդ կազմակերպությունների պաշտոնական ներկայացուցիչներ, այլ գործելու են իբրև անհատներ[11]։ Այսպիսով, կազմակերպությունը ծրագրվում էր իբրև մի տարածոն «Հովանոց»[12], որը պետք է միավորեր և կոորդինացներ առկա կազմակերպությունների աշխատանքները, ապահովեր նրանց միջև սերտ համագործակցությունը և հայ ժողովրդի շահերը ներկայացներ Վաշինգտոնում։ 1973 թ. համագումարի երկրորդ համաժողովը հաստատեց կազմակերպության կանոնադրությունը և ընտրեց 15 հոգուց բաղկացած Տնօրենների խորհուրդ։ Այդ համաժողովին նախորդած և հաջորդած ժողովների ընթացքում ընդլայնվում էր կազմակերպության անդամակցությունը, ճշգրտվում էին նրա նպատակներն ու խնդիրները, ձևավորվում էր կառուցվածքը, որը աննշան փոփոխություններով գործում է մինչև օրս։

Ամերիկայի հայկական համագումարը կառավարվում է Հոգաբարձուների խորհրդի և Տնօրենների խորհրդի կողմից։ Հոգաբարձուների խորհուրդն իրականացնում է հիմնադրամի ֆինանսավորումն ու ընդհանուր ղե-

---

[8] The Armenian Reporter, 21. XII. 1972.

[9] The Armenian Assembly. Summary Report, p. 68.

[10] Նույն տեղում, էջ 69։

[11] Նույն տեղում, էջ 85։

[12] Նույն տեղում, էջ 96։

կավարումը, կազմում է ծրագրեր, նշանակում է Տնօրենների խորհրդի անդամներին։ Հոգաբարձուների խորհրդի անդամները կազմակերպության գլխավոր նվիրատուներն են, որոնք հիմնականում խոշոր ձեռներեցության ներկայացուցիչներ են։ Խնամակալ (trustee) են կոչվում այն նվիրատուները, որոնք կազմակերպության կարիքների համար տարեկան տրամադրում են 10.000 դոլար և ավելին, գործակից խնամակալները (associate trustee) հատկացնում են 5.000 դոլար, իսկ կրտսեր խնամակալները (fellow trustee)՝ 1.000. դոլար։ Խնամակալների խորհրդի կառուցվածքում ներգրավված են նաև կրտսեր նվիրատուները՝ հովանավորները (patron), աջակիցները (supporter), երաշխավորները (sponsor), որոնց տարեկան անդամավճարները համապատասխանաբար կազմում են 500, 100 և 25 դոլար[13]։ Այսպես, իր սկզբնավորման շրջանում՝ 1972—1973 թթ. հիմնադրամի բյուջեն կազմում էր 250.000. դոլար[14], 1974 թ.՝ 120.000[15], իսկ 1984 թ. այն անցնում էր 2 մլն. դոլարից[16]։

Տնօրենների խորհուրդը, իր հերթին, հանձնարարականներ է տալիս Հոգաբարձուների խորհրդին և իրականացնում է կազմակերպության պրակտիկ գործունեությունը։ Տնօրենների խորհուրդը բաղկացած է գործադիր կոմիտեից և տնօրենների խմբից, որոնց ընդհանուր թիվը կազմում էր 24 հոգի։ Մինչև 1984 թ. այդ 24 անդամներից 12-ը Հայ հեղափոխական դաշնակցության և Ռամկավար ազատական կուսակցության ներկայացուցիչներ էին (6-ական հոգի), իսկ մնացած 12-ը այսպես կոչված անկախներ էին։ Սակայն, 1984 թ. այդ դաշինքը կազմալուծվեց, քանի որ կուսակցությունները իրենց ներկայացուցիչներին հետ կանչեցին կազմակերպության գործադիր մարմնից։ Դրանից հետո կուսակցական ներկայացուցչությամբ կազմակերպական կառուցման սկզբունքը վերացվեց, և այժմ Տնօրենների խորհրդում ներգրավված են երկրի տարբեր ասպարեզների երևելի գործիչներ՝ գիտնականներ, ձեռներեցներ, իրավաբաններ, պետական ծառայողներ, այսինքն՝ ԱՄՆ-ի հայ համայնքի ընտրանին։

Հայկական համագումարի անդամներ են հիմնականում խնամակալները, ինչպես նաև Տնօրենների խորհրդ՝ անդամները, որոնց ընդհանուր թիվը 1995 թ. կազմում էր մոտ 500 հոգի[17]։ Սովորաբար ընդունված անդամակցության փոխարեն կազմակերպությունն ունի խնամակալներ, որոնք մշտապես օգտագործում են իրենց անհատական կարողություններն ու ընդունակությունները կազմակերպության աշխատանքներն իրագործելու համար։ Հովանավոր է համարվում յուրաքանչյուր այն հայը, որն իրեն այդպիսին հայտարարում է՝ ստորագրելով համապատասխան հայտարարագիր և վճարելով միանվագ անվանական անդամավճար։ Հովանավորը այդ կարգավիճակում մնում է այնքան ժամանակ, որքան ցանկանում է։ Հայտարարագրի մեջ մասնավորապես ասվում է, որ հովանավորը «Հայկական համագումարը համարում է այն գործնական և պատշաճ միջոցը, որի օժանդակությամբ նա կարող է միանալ հայ համայնքի բոլոր հատվածները ներկայացնող մյուս անհատներին՝ աջակցելու համար հայ մշակույթի բոլոր դրսևորումների պահպանմանն ու զարգացմանը»[18]։ Հայ համայնքի կարիքներին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությունը հաղորդվում է բոլոր խնամակալներին, և երբ միահամուռ ու համատեղ գործողություն է պահանջվում, խնամակալները ներգրավվում են կազմակերպության համապատասխան ձեռնարկումներում։

---

[13] The Armenian Reporter, 16. II. 1978.

[14] The Armenian Reporter, 14. XII. 1972.

[15] The Armenian Weekly, 6. IX 1973.

[16] Armenian Assembly of America. Aims and Accomplish ments. Washington. 1985, p. 2.

[17] Armenian Assembly of America. Annual Report, 1995, p. 34 -35.

[18] The Armenian Observer, 19. II. 1975.

Չնայած հիմնադրամի ստեղծման նախաձեռնողներն ու դաղափարախոսները ողջունում էին հայ քաղաքական կուսակցությունների մասնակցությունը հիմնադրամի աշխատանքներին և փորձում էին ապահովել քաղաքական հավասարակշռությունը կազմակերպության գործադիր մարմնում, այնուամենայնիվ, Հայկական համագումարի կազմավորումն ու գործունեությունը միանշանակորեն չընդունվեց հայ քաղաքական կուսակցությունների կողմից։ Այն ժամանակ, երբ ամերիկահայ հասարակական-քաղաքական ուժերի գերակշիռ մեծամասնությունը ողջունեց ԱՀՀ-ի երևան դալը և այն ընդունեց որպես հայ համայնքի «նոր շարժիչ ուժ»[19], որոշ խմբավորումներ, ըստ երևույթին ԱՀՀ-ի ժողովրդականությամբ անհանդստացած, հանդես եկան այնպիսի մեկնաբանություններով, որոնք ակնհայտորեն սեփական մեկնաբանություն էին տալիս այն դերին, որ մտադիր էր խաղալ այս կազմակերպությունը։ Այսպես, Ամերիկավար ազատական կուսակցության պաշտոնաթերթ «Արմենիան Միրրոր-Սփեքթեյթոր» շաբաթաթերթը, ողջունելով ԱՀՀ-ի ստեղծումը, այն համարում էր «կարևոր շրջադարձ հայ համայնքի կյանքում» և կոչ էր անում «սատար կանգնել Հայկական համագումարի ձեռնարկումներին»[20]։ Մինչդեռ, Հայ հեղափոխական դաշնակցությունը, որն ամերիկահայ համայնքում մշտապես աչքի է ընկել բարձր կազմակերպվածությամբ և ուրույն կառույցների ընդարձակ ցանցով, վերապահությամբ էր ընդունում ԱՀՀ-ի ստեղծումը։ Բոստոնում տպադրվող դաշնակցական «Հայրենիք» օրաթերթը իր խմբագրականներից մեկում համագումարին նախազգուշացնում էր, որ եթե նորաստեղծ կազմակերպությունը ոտնձգություններ կատարի առկա քաղաքական խմբավորումների գործունեության նկատմամբ կամ փորձի լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են եկեղեցու պառակտումն ու կուսակցական տարաձայնությունները, ապա այն ամբողջությամբ դատապարտված է ձախողման։ Թերթը նաև կոչ էր անում «թոթափել «կազմակերպություն» դառնալու հետին մտածումն իսկ և հրաժարիլ այսպես կոչված «միջդաղութային» հարաբերություններև կամ «գոյություն ունեցող տարակարծությունները հարթելու» առաջադրանքներև»[21]։

Չնայած ԱՀՀ-ի նկատմամբ ցուցաբերած տարբեր մոտեցումներին, հայ քաղաքական կուսակցությունները ակտիվ մասնակցություն են ունեցել համագումարի տարբեր ձեռնարկումներում՝ հատկապես նրա ակնհայտ հաջողություններից հետո։ Իր գործունեության ընթացքում ԱՀՀ-ն համագործակցել է ամերիկահայ գրեթե բոլոր ազդեցիկ կազմակերպությունների հետ, ինչպիսիք էին Հայ դատի հանձնախմբերը, Հայկական իրավունքների խորհուրդը, Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), Հայ օգնության միությունը (ՀՕՄ), Հայկական ուսումնասիրությունների և հետազոտությունների ազգային ընկերությունը (ՆԱԱՍԸ), Ամերիկահայ քաղաքացիների լիգան և այլն։

Ինչպես վերև ասվեց, Հայկական համագումարը դաշնակցային մակարդակում գրանցված է իբրև մշակութային և կրթական հիմնադրամ, որի պաշտոնական նպատակն է նպաստել ԱՄՆ-ում հայ մշակույթի պահպանմանն ու տարածմանը և ամերիկահայերի կրթությանը։ Սակայն, իրականում, կազմակերպության գործունեությունը կառուցված է այնպես, որ նրա կողմից ֆինանսավորվող ծրագրերը կողմնորոշված են դեպի ավելի ընդարձակ նպատակների իրականացումը.

1. ԱՄՆ-ի հասարակական կարծիքի ձևավորումը, օրենսդիր և գործադիր իշխանությունների վրա ազդեցության բանեցնելը՝ ամերիկյան հասարակության, գործադիր և օրենսդիր իշխանությունների կողմից 1915 թ. Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու նպատակով։

---

[19] The Armenian Reporter, 27. IX. 1973.

[20] The Armenian Mirror – Spectator, 4. VIII. 1973.

[21] Հայրենիք, օրաթերթ, 25. VIII. 1973։

2. Ամերիկահայերի ներգրավումը ԱՄՆ-ի քաղաքական համակարգում՝ երկրի քաղաքական կյանքում հայերի դերի բարձրացմանը նպաստելու համար։

Այս նպատակներին համապատասխան՝ Հայկական համագումարն իրականացնում է մի շարք ծրագրեր։ Կառավարական ծրագիրը նպաստում է ամերիկահայության մասնակցությանը կառավարման գործընթացներին՝ նահանգային և դաշնակցային մակարդակներում, ինչպես նաև ամերիկահայերի շահերի պաշտպանությանը՝ իշխանության օրենսդիր և գործադիր մարմիններում։ Հասարակական ծրագիրը նախատեսում է ամերիկահայերին հետաքրքրող հարցերի պարզաբանումը ամերիկյան հասարակությանը՝ լրատվության զանգվածային միջոցների և հատուկ հրապարակումների միջոցով։ Գիտահետազոտական ծրագիրը նախատեսում է ուսումնասիրություններ Հայոց ցեղասպանության հարցերի, ամերիկահայ համայնքի, սոցիալական սֆյուռքի զարգացման հեռանկարների շուրջ։ Հայագիտական ծրագրերն իրականացվում են դրամական նպաստների, գիտաժողովների և հրապարակումների միջոցով։ Ուսանողական ծրագիրը հետամտում է ամերիկյան պետական կառավարման համակարգում հայ երիտասարդների ամենամյա գործնական ուսումնառության կազմակերպման նպատակը։ Հայ ուսանողները բաշխվում են կոնգրեսի անդամների, կառավարական պաշտոնյաների գրասենյակների վրա, շփվում պետական մեխանիզմի առօրյա գործունեության հետ, մասնակցում փաստաթղթերի նախագծերի պատրաստմանն ու գործնական իրականացմանը։

Փաստորեն, Հայկական համագումարը ԱՄՆ-ի հայկական էթնիկական փոքրամասնության լոբբիստական ներգործության յուրահատուկ խումբ է։ ԱՀՀ-ն հատկապես նկատելի գործունեություն ծավալեց ամերիկյան կոնգրեսմեն-ների կողմից № 192, № 247, № 241 բանաձևերի քննարկման առթիվ՝ նրանց տրամադրելով մեծաքանակ նյութեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ։ Հայկական համագումարի ջանքերի շնորհիվ 1975 թ. ԱՄՆ-ի կոնգրեսը ընդունեց № 148 բանաձև, որը 1975 թ. ապրիլի 24-ը հայտարարում էր «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»։ (Սակայն, որպեսզի նշված օրինագիծը օրենքի ուժ ստանար, այն պետք է հաստատվեր սենատի և նախագահի կողմից)։ ԱՀՀ-ն նաև 1.175.000. դոլարի նպաստ ապահովեց լիբանանահայությանը քաղաքացիական պատերազմի տարիներին[32]։ ԱՀՀ-ն գործնական հետաքրքրություն է ցուցաբերել կոնգրեսում Թուրքիային տրամադրվելիք օգնության ու զենքի մատակարարման, Լիբանանում և Կիպրոսում տիրող դրության և այլ հարցերի քննարկման առնչությամբ։

Վերջին տարիներին հայ համայնքի քաղաքական, հասարակական և մշակութային բոլոր կազմակերպություններից հենց ԱՀՀ-ի գործունեությունն է ուղղված ԱՄՆ-ի իշխանության վերին մարմինների ներկայացուցիչների հետ հարաբերությունների իրականացմանը։ Իր հերթին, կազմակերպությունը վայելում է ամերիկյան կառավարության և հասարակության աճող վստահությունը։ Քանի որ հայ ավանդական քաղաքական կուսակցությունների ազդեցությունը հայ համայնքում աստիճանաբար նվազում է, այդ դերը կարող է իրականացնել ամերիկյան տիպի համահայկական կազմակերպությունը։ Այս կապակցությամբ վերջին տարիներին ԱՄՆ-ի պետական իշխանության մարմինները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Հայկական համագումարի նկատմամբ, քանի որ վերջինս ձգտում է կապող օղակ դառնալ հայ համայնքի և ԱՄՆ-ի կառավարող շրջանակների միջև։ Դրա վկայությունը կարող է լինել այն հանգամանքը, որ վերջին տարիներին հենց ԱՀՀ-ն է ստանում և բաշխում հայագիտական ծրագրերի ու կրթության, լիբանանա-

---

[32] The Armenian Reporter, 13. III. 1975.

[33] Armenian Assembly of America. Aims and Accomplishments, p 14.

հայությանն ու Հայաստանում երկրաշարժից տուժած շրջանների համար նախատեսված դաշնակցային ֆինանսական հատկացումների մեծ մասը։ ԱՀՀ-ն նաև համայնքի այն կազմակերպություններից է, որին իրավունք էր վերապահված մասնակցելու Վաշինգտոնում կառուցվող ցեղասպանության թանգարանի հայկական բաժնի ստեղծման և քարոզչության աշխատանքներին։

Արդի փուլում կազմակերպությունը, ամբողջ երկրով մեկ մասնաճյուղերի ընդարձակ ցանց ստեղծելով և նոր անդամներ ներգրավելով, ձգտում է դառնալ համաամերիկյան հայկական կազմակերպություն։

ФОРМИРОВАНИЕ, ЦЕЛИ И СТРУКТУРА АРМЯНСКОЙ АССАМБЛЕИ АМЕРИКИ

К. Р. НААПЕТЯН

Резюме

Армянская Ассамблея Америки создана в 1972 году в качестве благотворительного и образовательного фонда. Штаб-квартира организации находится в Вашингтоне. В 1978 году был создан филиал в Лос-Анджелесе, в в 1989 году — представительство в Ереване.

Организация управляется Советом попечителей и Советом директоров, официальная цель — способствовать развитию национальной армянской культуры в США, содействовать образованию американских армян.

Общий денежный актив, который сейчас составляет несколько милллионов долларов, сложился из первоначального вклада в основном двух из инициаторов создания фонда: Стивена Мугара и Грайра Овнаняна. На современном этапе деятельность организации построена таким образом, что программы, субсидируемые фондом, ориентированы на осуществление более широких задач и целей:

1. Лоббирование исполнительной и законодательной власти США с целью признания исторического факта геноцида армян 1915 года.

2. Вовлечение американских армян в политическую систему США с целью возрастания роли армян в политической жизни страны.